Հաստատում եմ
Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարանի Ռեկտորի ժ/պ.
Լիլիթ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Հայարփի Գագիկի Սահակյանի «Սուբյեկտի հիմնահարցը Միշել Ֆուկոյի փիլիսոփայության մեջ» թեմայով Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

1) **Թեմայի հրատապությունը և արդիականությունը**: Հայարփի Գագիկի Սահակյանի «Սուբյեկտի հիմնահարցը Միշել Ֆուկոյի փիլիսոփայության մեջ» թեմայով ատենախոսությունն առանձնանում է իր տեսական արդիականությամբ և ժամանակակից փիլիսոփայական դիսկուրսի շրջանակում բարձրացված հիմնահարցերի խորքային ու համակարգված քննությամբ: Աշխատությունը նվիրված է սուբյեկտի ձևավորման և վերաիմաստավորման խնդրին՝ Միշել Ֆուկոյի քննադատական փիլիսոփայության համատեքստում, ինչը մեր օրերում ձեռք է բերել առանձնահատուկ նշանակություն՝ պայմանավորված ժամանակակից թվայնացված, տվյալահեն և կանխատեսական կառավարման համակարգերի տարածմամբ: Ատենախոսությունում սուբյեկտի հիմնահարցը դիտարկվում է ինչպես դասական կարգապահական և կենսաքաղաքական իշխանության տեսանկյունից, այնպես էլ՝ արդի ալգորիթմիկ և տվյալահեն կառավարելիության համատեքստում, ինչը թեմային հաղորդում է գիտական նորություն և կիրառական կարևորություն:

2) **Ատենախոսության կառուցվածքը և գիտական հիմնական դրույթների հիմնավորվածությունը**: Ատենախոսության կառուցվածքը տրամաբանական է, ամբողջական: Աշխատանքը բաղկացած է Ներածությունից, երկու գլուխներից, Եզրակացությունից և Օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունը, գիտատեսական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակներն ու խնդիրները,

մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, առաջադրվում են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Առաջին գլուխը նվիրված է սուբյեկտի հիմնահարցի քննությանը Միշել Ֆուկոյի իշխանական-դիսկուրսիվ վերլուծության համատեքստում: Գլխում իրականացվում է «սուբյեկտ» հասկացության տեսական վերաիմաստավորում՝ հրաժարվելով դրա դասական մարդաբանական մեկնաբանությունից և այն դիտարկելով որպես իշխանական հարաբերությունների ու դիսկուրսիվ կառուցվածքների շրջանակում ձևավորվող դիրք: Վերլուծվում են կարգապահական և կենսաքաղաքական իշխանության հիմնական մեխանիզմները, մարմնի և բնակչության կառավարման ձևերը, ինչպես նաև ցույց է տրվում, թե ինչպես է ժամանակակից հասարակություններում վերահսկողության տրամաբանությունը տարածական կարգավորումից տեղափոխվում դեպի ժամանակային կարգապահություն, կանխատեսելիություն և ռիսկերի կառավարում: Գլխում հիմնավորվում է այն դրույթը, որ սուբյեկտայնությունը ձևավորվում է ոչ թե որպես ինքնաբավ էություն, այլ որպես իշխանական, դիսկուրսիվ և կառավարման հարաբերությունների արդյունք:

Երկրորդ գլուխը նվիրված է սուբյեկտի գործունեության, դիմադրության և ինքնակերտման հիմնահարցերի քննությանը ժամանակակից իշխանական հարաբերությունների համատեքստում: Այս գլխում վերլուծվում է դիմադրությունը որպես իշխանության ներքին և անբաժանելի գործառույթ՝ ցույց տալով, որ ազատությունն ու իշխանությունը փոխկապակցված հարաբերություններ են: Քննության առարկա են դառնում սուբյեկտի ինքնակերտման տեխնոլոգիաները, որոնց միջոցով անհատը ներգրավվում է ինքնակարգավորման և ինքնափոխակերպման գործընթացներում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ալգորիթմիկ և տվյալահեն կառավարելիության պայմաններում ձևավորվող «ալգորիթմիկ սուբյեկտի» խնդրին, երբ սուբյեկտայնությունը կառուցվում է կանխատեսման, պրոֆիլավորման և հաշվարկային մեխանիզմների միջոցով: Գլխի ավարտին առաջադրվում և հիմնավորվում է «պատասխանատու փոխկախյալ սուբյեկտի» տեսական մոդելը՝ որպես հետկենսաքաղաքական բարոյականության հնարավոր ձև, որտեղ ներկայացնում է սուբյեկտի երկակի դիրքը ժամանակակից կառավարման համակարգերում՝ որպես միաժամանակ փոխադարձ կախվածության և համակեցության գիտակցմամբ կարգավորվող և ինքնավար, ինքնակարգավորվող միավոր:

Օգտագործված գրականության ցանկն առանձնանում է արդիականությամբ և թեմային համապատասխանությամբ: Հեղինակը հիմնվել է ինչպես Միշել Ֆուկոյի հիմնական աշխատությունների, այնպես էլ ժամանակակից արևմտյան և հայ հեղինակների ուսումնասիրությունների վրա՝ ընդգրկելով սուբյեկտայնության, իշխանության, կենսաքաղաքականության, «ալգորիթմիկ կառավարելիության» և ժամանակակից սոցիալական տեսությունների վերաբերյալ կարևոր գիտական աղբյուրներ: Գրականության ցանկում ներառված են Ժիլ Դելյոզի, Ջուդիթ Բաթլերի, Ջորջո Ագամբենի, Նիկոլաս Ռոուզի և այլ հեղինակների հիմնարար աշխատությունները, ինչպես նաև հայ հեղինակների համապատասխան ուսումնասիրություններ: Օգտագործված գրականությունը նպաստում է ատենախոսության տեսական հիմնավորվածությանը և ապահովում հետազոտության գիտական ամբողջականությունը: Այն ավելի կշահեր, և հետազոտվող հիմնահարցերի վերլուծությունն առավել բազմակողմանի կլիներ, եթե հեղինակն անդրադառնար նաև ռուս հետազոտողների, մասնավորապես՝ Ա.Ա.Ֆրոլովի «Субъект и субъективация в ситуации биополитики: Фуко – Рансьер» (2019), Տ.Ա.Ենադիևայի «Проблема субъектности в работе М. Фуко “Субъект и власть”» (2018), Պ.Ս. Խիցկու «Проблема субъекта в философии М. Фуко» (2004), որտեղ հետազոտվում են սուբյեկտի ձևավորման միտումներն ու օրինաչափությունները՝ ինչպես իշխանության ներգործության, այնպես էլ ինքնաձևավորման պրակտիկաների միջոցով, իշխանական հարաբերությունների համատեքստում սուբյեկտի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները և դրանց շարունակական-մշտնջենական բնույթն ու պատմական պայմանավորվածությունները:

3) Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսությունը կարող է նպաստել սուբյեկտայնության հիմնահարցի հետագա ուսումնասիրությանը, կիրառվել կրթության, առողջապահության, վարչարարության և այլ ոլորտներում գործող տվյալահեն և թվայնացված համակարգերի քննադատական վերլուծություններում, ինչպես նաև ծառայել որպես ուսումնաօժանդակ նյութ բուհական դասընթացների համար:

4) Ատենախոսության եզրակացությունները: Հեղինակը հիմնավորում է, որ ժամանակակից հասարակություններում սուբյեկտի ձևավորումը այլևս չի սահմանափակվում միայն կարգապահական և կենսաքաղաքական իշխանության դասական մեխանիզմներով, այլ ներառում է նաև ժամանակային, կանխատեսական

և տվյալահեն կառավարելիության նոր ձևերը: Եզրակացության մեջ ընդգծվում է, որ ժամանակակից տեխնոլոգիական միջավայրում իշխանության առանցքային տրամաբանությունը տեղափոխվում է ներկայության վերահսկումից դեպի ապագայի հաշվարկ և հավանականությունների կառավարում, ինչի արդյունքում փոխակերպվում են սուբյեկտայնության, մարմնավորության և պատասխանատվության սահմանները: Հեղինակը ցույց է տալիս, որ ալգորիթմիկ և տվյալահեն միջավայրերում սուբյեկտը դառնում է միաժամանակ կարգավորվող և ինքնակարգավորվող միավոր, իսկ «պատասխանատու փոխկախյալ սուբյեկտի» տեսական մոդելը ներկայացվում է որպես հետկենսաքաղաքական բարոյականության հնարավոր ուղղություն: Եզրակացությունները տրամաբանական են, հիմնավորված և բխում են հետազոտության ամբողջ բովանդակությունից:

6) Աշխատանքի վերաբերյալ դիտողություններն ու վիճարկելի դրույթները կարելի է դասակարգել հետևյալ դիտանկյուններից.

1. Ներմուծված տերմինների հստակեցման խնդիր.

Ատենախոսության մեջ հեղինակն առաջադրում է մի շարք հասկացություններ՝ «ժամանակային կարգապահություն», «տվյալայնացված մարմին», «ալգորիթմիկ սուբյեկտ», «պատասխանատու փոխկախյալ սուբյեկտ» և այլն, որոնք որոշ դեպքերում կարիք ունեն բովանդակային հստակեցման և գիտական շրջանառության համար հիմնավորման, մասնավորապես Բացի այդ, այդ հասկացությունների միջև սահմանային տարբերակումները կարող էին ներկայացվել ավելի համակարգված և հստակ ձևով: Մասնավորապես՝ «ալգորիթմիկ սուբյեկտ» և «տվյալայնացված մարմին» հասկացությունների փոխհարաբերությունը որոշ հատվածներում մնում է մասնակիորեն համընկնող, և օգտակար կլիներ ավելի հստակ տարանջատել դրանց գործառնական և մեթոդաբանական տարբերությունները:

2. Գործնական մակարդակի, գործնական-տեղային օրինակների սահմանափակ ներկայացվածություն.

Թեև ներածության մեջ կարևորվում է հայաստանյան սոցիալական միջավայրում հետազոտվող խնդիրների տեղայնացումը, սակայն աշխատանքի հիմնական հատվածներում կոնկրետ տեղային օրինակները կամ ինստիտուցիոնալ դեպքերը համեմատաբար սահմանափակ են: Մինչդեռ դրանց դիտարկումն ու վերլուծությունը կարող էր ուժեղացնել աշխատանքի գործնական արժեքը: Ցանկալի կլիներ

առավել կոնկրետ անդրադարձը հայաստանյան սոցիալական և ինստիտուցիոնալ իրականությանը՝ մասնավորապես կրթական, առողջապահական կամ վարչարարական ոլորտներում կիրառվող թվայնացման, գնահատման և տվյալահեն վերահսկողության համակարգերի օրինակներով: Դրանք հնարավորություն կտային առավել տեսանելի դարձնել աշխատանքի գործնական նշանակությունը և ֆուկոյան տեսական գործիքակազմի կիրառելիությունը տեղական իրականության պայմաններում:

3. Ֆուկոյի և թվային տեսությունների կապի մեթոդաբանական լրացուցիչ հիմնավորման անհրաժեշտություն

Հեղինակը հետաքրքիր փորձ է կատարում տեղափոխելու Ֆուկոյի իշխանության տեսությունը տվյալահեն և կանխատեսական կառավարման ոլորտ, սակայն որոշ դեպքերում այդ անցումը մնում է առավելապես կոնցեպտուալ և պահանջում է հավելյալ մեթոդաբանական հիմնավորում՝ ցույց տալու համար, թե որքանով են ժամանակակից ալգորիթմիկ մեխանիզմները շարունակում ֆուկոյական կառավարելիության տրամաբանությունը կամ ընդհակառակը՝ հեռանում դրանից:

Դիմադրության խնդրի քննարկման ժամանակ հեղինակը հիմնականում կենտրոնանում է տեսական և կառուցվածքային մակարդակի վրա, մինչդեռ ժամանակակից թվային միջավայրում «դիմադրության» կոնկրետ պրակտիկաների՝ օրինակ տվյալների պաշտպանության, թվային ինքնության վերահսկման կամ ալգորիթմիկ որոշումների դեմ սոցիալական արձագանքների առավել ընդարձակ վերլուծությունը կարող էր լրացուցիչ ամբողջականություն հաղորդել աշխատանքին:

4. Վիճարկելի են ատենախոսության նորույթների շարքում տեղ գտած հետևյալ պնդումները.

ա) «Ցույց է տրվել, որ ժամանակակից տեխնոլոգիական և սոցիալ-մշակութային տեղաշարժերը պայմանավորում են իշխանության մեխանիզմների որակական վերափոխում, ինչը պահանջում է ֆուկոյան վերլուծության քննադատական ընդլայնում և համապատասխանեցում նոր պայմանների տրամաբանությանը» (էջ 12):

Խնդիրն այլ արժևորում կստանար, եթե խոսքը վերաբերեր Ֆուկոյի փիլիսոփայության և հայեցակարգային մոտեցումների նորովի մեկնաբանությանն ու իմաստավորմանը, ոչ թե՝ սոսկ դրանց անհրաժեշտությունը ընդգծելուն:

բ) «Առաջադրվել և հիմնավորվել է իշխանության ժամանակակից ձևափոխությունների ուսումնասիրության համակցված տեսական-մեթոդաբանական մոտեցում,

որն ընդլայնում է հայալեզու փիլիսոփայական դաշտի վերլուծական հնարավորությունները:

Այսպիսով՝ ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է թե՛ թեմայի հայաստանյան գիտական դաշտում համակարգված և ընդլայնված քննությամբ...» (էջ 12):

Նախ, «համակցված տեսական-մեթոդաբանական մոտեցումն» ինքնին (և ոչ թե դրա արդյունքում ստացված եզրահանգումներն ու բացահայտումները) որպես գիտական նորույթ ներկայացնելը վիճարկելի է:

Երկրորդ, հարցեր է առաջացնում նաև հետազոտության թեմայի՝ «հայաստանյան գիտական դաշտում համակարգված և ընդլայնված քննությունը» որպես գիտական նորույթ ներկայացնելը:

5. Լեզվաոճական խնդիրներ

Աշխատության առանձին հատվածներում նախադասությունները չափազանց ծավալուն և ծանրաբեռնված են տեսական եզրաբանությամբ, ինչը երբեմն դժվարացնում է ընթերցումը: Որոշ լեզվական խմբագրումները կարող էին նպաստել տեքստի առավել հստակ և մատչելի ընկալմանը:

Օրինակ՝ «ինքնառեֆլեկսիվ գիտակցություն» արտահայտության փոխարեն թերևս բավարար կլիներ գործածել «ռեֆլեկսիվ գիտակցություն» բառակապակցությունը (էջ 18): Հստակեցման և լրացուցիչ մեկնաբանության կարիք ունի հետևյալ միտքը՝ «Կարգապահական իշխանության, կենսաքաղաքական կարգավորման և ինքնաձևավորման տեխնոլոգիաների վերլուծությունները հնարավորություն տվեցին սուբյեկտին դիտարկել որպես պատմականորեն ձևավորվող և իշխանական հարաբերություններով կառուցվող հիմք» (էջ 4): Առնվազն բացատրության կարիք ունի, թե ինչի՞ հիմքի մասին է խոսքը:

Մի շարք դեպքերում շարադրանքը ներկայացվում է երկրորդ դեմքով («Աշխատանքում նպատակ ունենք...» - էջ 7, «Այս նպատակին հասնելու համար մեզ համար նախանշել ենք...» - էջ 7, «Միաժամանակ՝ այս տեսական շրջանակը ներմուծել ենք հայալեզու փիլիսոփայական դիսկուրս...» - էջ 11, «մենք առաջադրել և փորձել ենք հիմնավորել...» - էջ 12), մինչդեռ ատենախոսությունների շարադրման ակադեմիական ոճը ենթադրում է առավելապես կրավորական ձևակերպումներ, ինչպես օրինակ՝

«Հիմնավորվել է այն դրույթը, որ...» - էջ 11, «Առաջադրվել և հիմնավորվել է այն թեզը, որ...» - էջ 11, «Ցույց է տրվել, որ...» - էջ 12 և այլն:

6. Տեխնիկական բնույթի թերություններ և բացթողումներ

ա) Ատենախոսության «Բովանդակություն» բաժնում ներկայացված էջադրումները մի շարք դեպքերում չեն համապատասխանում աշխատանքի հիմնական տեքստում առկա էջադրումներին: Մասնավորապես՝

- Գլուխ 2՝ տեքստում՝ էջ 76, «Բովանդակություն»-ում՝ էջ 77,
- 2.2 ենթագլուխ՝ տեքստում՝ էջ 85, «Բովանդակություն»-ում՝ էջ 86,
- 2.3 ենթագլուխ՝ տեքստում՝ էջ 91, «Բովանդակություն»-ում՝ էջ 92,
- 2.4 ենթագլուխ՝ տեքստում՝ էջ 105, «Բովանդակություն»-ում՝ էջ 106,
- 2.5 ենթագլուխ՝ տեքստում՝ էջ 113, «Բովանդակություն»-ում՝ էջ 114,
- «Եզրակացություններ» բաժին՝ տեքստում՝ էջ 130, «Բովանդակություն»-ում՝ էջ 131,
- «Գրականության ցանկ» բաժին՝ տեքստում՝ էջ 134, «Բովանդակություն»-ում՝ էջ 135:

բ) «Հետազոտության օբյեկտը և առարկան», ինչպես նաև «Աշխատանքի կառուցվածքը և ծավալը» ենթաբաժինները ներառված են ատենախոսության սեղմագրում, սակայն բացակայում են բուն ատենախոսության կառուցվածքում:

գ) Ատենախոսության մեջ հղումների ձևավորման միօրինակությունը լիովին պահպանված չէ: Աշխատանքի հիմնական մասում հղումները կատարվել են դասական եղանակով՝ էջատակային ծանոթագրությունների (footnote) ձևաչափով, մինչդեռ 6-7 էջերում կիրառվել է APA ձևաչափին բնորոշ ներտեքստային հղում՝ փակագծերում:

դ) Ատենախոսության ձևավորման ընթացքում որոշ ենթագլուխներ սկսվում են նոր էջից, մինչդեռ ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ պահանջների համաձայն նոր էջից պետք է սկսվեն միայն ատենախոսության գլուխները: Մասնավորապես՝

- 1.1 ենթագլուխ՝ էջ 18,
- 1.3 ենթագլուխ՝ էջ 41,
- 1.4 ենթագլուխ՝ էջ 54,
- 1.5 ենթագլուխ՝ էջ 64,
- 2.1 ենթագլուխ՝ էջ 78,
- 2.4 ենթագլուխ՝ էջ 105,

- 2.5 ենթագլուխ՝ էջ 113:

Այսուհանդերձ, ներկայացված դիտողությունները չեն ստվերում ատենախոսության գիտական արժեքը:

7) Ատենախոսության համապատասխանությունը առաջադրվող պահանջներին: Աշխատանքը հիմնականում շարադրված է պատշաճ գիտական հասկացութային ապարատով, աչքի է ընկնում տեսական հագեցվածությամբ և անգլալեզու աղբյուրների կիրառությամբ: Ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությունների համար ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ սահմանած պահանջներին, ատենախոսության սեղմագիրը հիմնականում համապատասխանում է ատենախոսությանը:

Այսպիսով, Հայարփի Գագիկի Սահակյանի «Սուբյեկտի հիմնահարցը Միշել Ֆուկոյի փիլիսոփայության մեջ» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն և արդիական գիտական հետազոտություն է, ունի տեսական նորույթ, իսկ հեղինակը արժանի է Թ.00.01՝ «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ՀՊՄՀ Գեորգ Բրուտյանի անվան փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի թիվ 8 նիստում: Նիստին մասնակցել են փ.գ.դ. Հասմիկ Հովհաննիսյանը, փ.գ.դ. Քաջիկ Օհանյանը, փ.գ.թ. Հովհաննես Հովհաննիսյանը, փ.գ.թ. Անդրանի Ստեփանյանը, փ.գ.թ. Մարինե Շահբազյանը, Ամբիոնի դասախոս Նելլի Պետրոսյանը, Ամբիոնի հայցորդ Դիանա Աղաբալյանը:

Ամբիոնի վարիչ՝ փ. գ. դ. Հասմիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գիտական քարտուղար՝ մ.գ.թ. Հակոբ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ